

Քեզ յաւիտեանս սիրով
սիրեցի: Երեմ. ԼԱ. 3
Ինչպէս որ մայր մը իր որդին
կը մխիթարէ, ա՛նպէս ալ ես
ձեզ պիտի մխիթարեմ: Ես. ԿԶ. 13
Քու. խօսքդ իմ ոտքերուս
ճրագ է: Սաղ. ձԺԺ. 105

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Ճշմարտութիւնը պիտի գիտ-
նաք, ու ան ճշմարտութիւնը
ձեզ պիտի ազատէ: Յովհ. Ը. 32
Ուրեմն՝ Քրիստոսի կողմանէ
դեսպանութիւն կ'ընենք, . . .
կ'աղաքենք ձեզի Քրիստոսի
կողմանէ, հաշտուեցէք Աս-
տուծոյ հետ: Բ. Կորնթ. Ե. 20

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Քաժանորդագին տարկ. — Յրանսա եւ Սուրիա 4, Պալքանեան երկիրներ 5 Ֆր. ուրիշ երկիրներ 1,50 ՇԻԼ.

Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

ԹԻԻ 12

Ա. ՏՄՐԻ

ՄԱՐՏ 1926

ՄԽԻԹԱՐՈՒԱԾ՝ ՄԽԻԹԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

PEACE PERFECT PEACE (F. B. Meyer)

Ամէն մխիթարութեան Աստուածը, Ան որ մեզ կը մը-
խիթարէ մեր ամէն նեղութիւններուն մէջ, որ մենք կա-
րող ըլլանք մխիթարել զանոնք՝ որ ամէն նեղութիւններու
մէջ են, ան մխիթարութիւնովը՝ որով մենք Աստուծմէ
կը մխիթարուինք: Բ. Կոր. 1, 3. 4:

Ո՛վ Աստուծոյ զաւակ, օտար բան մի՛ սեպեր
այն նեղութեան բորբոքը, որ քեզ փորձելու հա-
մար կ'ըլլայ, որպէս թէ օտար բան մը քեզի հան-
դիպած է. բնութեանս կը ուրախացիր, քանի որ
ասիկա՝ քու շիտակ շաւիղին վրայ գտնուելուդ
որոշ նշան մըն է: Անծանօթ երկրի մը մէջ ինծի
կ'ըսուի թէ քու բնակարանդ համեմուտ համար,
այսինչ քարոտ ճամբայէն անցնելու ես. ու երբ
կ'անցնիմ անկէ, ամէն մէկ քարի ցնցում կ'ապա-
ցուցանէ թէ ուղիդ շաւիղին վրայ կը գտնուիմ:
Նոյնպէս ալ Աստուծոյ զաւակը նեղութիւններու
մէջէն անցնելու պահուն չզարմանար, այլ գոհու-
նակութիւն կը յայտնէ: Ան գիտէ թէ այդ ճամ-
բան դէպի մարգարտեայ դուռը կ'առաջնորդէ,
քանզի շատ նեղութիւններով պիտի մոռնանք Աս-
տուծոյ Թագաւորութիւնը:

Քու նեղութիւններդ քիչ չեն կըր-
նար ըլլալ: Վեր նայէ: Ահա քու հայրդ-
անոր եւ մաքուր: Դուն անոր նմանելու ես: Սա-
կայն Անոր նմանելէ առաջ պէտք ունիս ակնաւ-
գործին խարտոցին, հալոցին ջերմութեան եւ ցո-
րենահար գաւազանին փշրման՝ ո՛չ թէ որպէսզի
երկինքը շահիս, այլ որպէսզի կորսնցնես անյար-
մարութիւններդ երկինքի համար: Հոն հաւաք-
ուած լուսաշող հոգիները կը վկայեն թէ իրենց
փարձատրութեան պայծառութիւնը կը համապա-
տասխանէ իրենց տրտմութեանց սաստկութեան:

Վստահ եղիր ուրեմն թէ հայրդ քեզ սաստիկ նե-
ղութիւններէ անցընելով պիտի հասցնէ աւելի
փայլուն պսակի մը: Վեր նայէ: Կը խորհիս
թէ դժոխքի իշխանը գո՛հ մնաց որ զինք թող-
լով նոր Տէրոջդ, Քրիստոսի հետեւեցար: Քա՛ւ լի-
ցի: ձիշդ քու դարձ դ պահուն անունդ աւելցաւ
դատաւարութեանը սեւ ցանկին մէջ եւ խա-
ւարի բոլոր իշխանութիւնները երդուեցան խա-
փանել քու ճամբադ: Ուրեմն կը զարմանա՞ս որ
քու վրադ ալ նեղութիւններ հասնին դժոխքէն,
ինչպէս հասան Յոբի վրայ, թէպէտեւ երկինքի
Թոյտուութեամբ:

ԲՈՂՈՐՈՒՔԴ ՆԱՅԷ: Դուն տակաւին կը
գտնուիս այն աշխարհին մէջ, որ քու Տէրդ խա-
չը հանեց եւ կրկին պիտի հանէր, եթէ դարձեալ
աշխարհ գար: Աշխարհ չ'կրնար քեզ սիրել: Քեզ
Բէնեդէքուդ պիտի անուանէ: Քեզ դուրս պիտի
արտաքսէ, քեզ սպաննելը կրօնասիրութիւն պի-
տի համարէ: Աշխարհի վրայ նեղութիւններ պիտի
ունենաս սակայն կրնաս ուրախ ըլլալ անոնց մէջ:

ՄԵՋԴ ՆԱՅԷ: Հոն ի՞նչ կը տեսնես եթէ ոչ
չար սիրտ մը. Աստուծոյ կամքին եւ կանոննե-
րուն դէմ շարունակ զայրացած, անգուսպ, կա-
մակոր եւ խռովեալ: Ուստի շարունակաբար Աս-
տուծոյ եւ քու կամքիդ միջեւ մոլուած պայքա-
րէն ի՞նչ կ'ակնկալես եթէ ոչ նեղութիւն: Մարդ-
կային կեանքը տագնապներու դպրոց մըն է,
որուն մէջ Թագաւորաց Թագաւորին Որդին ան-
գամ մտաւ հաւատարիմ քահանայապետ մը ըլ-
լալու համար:

Քեզի նման նեղութեանց մէջ գտնուողի մը
համար Սբ. Դիրքէն աւելի յարմար գրականու-

Թիւն չկայ եւ Սբ. Գիրքին ոչ մէկ ուրիշ մասը կրնայ վերնագրին չափ օգնել քեզի քու նեղութեանցդ մէջ: Թեսաղոնիկեցւոց Թուղթին յատկագիծը յոյսն է, փիլիպպեցւոց Թուղթինը՝ ուրախութիւն, շուովմայեցւոց Թուղթինը՝ հաւատք, եփեսացւոց Թուղթինը՝ երկնային բաներ եւ այս Թուղթինը՝ նեղութիւն: Առաքեալը իր այս Թուղթը գրեթէ կեանքէն յուսահատած էր: Այս Թուղթը Թաթիսուած է նեղութիւններու մէջ նման արիւն անախտ վերքի մը վրայ բռնուած Թաշկինակի մը: Սակայն այս համարին մէջ Առաքեալը նեղութեան հաստ պարսպապատին վրայ կառուցած է մխիթարութեան փոքրիկ սենեակ մը իրեն համար: Սենեակին քարերը իր նեղութեանց քարահանքէն հանուած են: Այս սենեակին մէջ նստած կ'երգէ ան, «Որ հն եաւրււլայ Աստուած»: Նաեւ քեզ կը հրաւիրէ հոն մինչեւ որ նեղութիւնդ փարատի եւ երկինքդ պայծառանայ: Մխիթարութեան սենեակն է այս:

Երբոր նեղութեան մէջ գտնուիս, երեք բանի ուշադրութիւն տուր. Ա. Մխիթարութիւն փնտռէ, Բ. Մխիթարութիւն ամբարէ եւ Գ. Այդ ընդունածդ մխիթարութիւնը ցրուէ:

(Շարունակելի)

Թրգ. Ն. ՄԻՆԱՍԵԱՆ

Ֆիլատելիա

ՏԷՐՈՋ ԽՕՄԲԸ

Տէ՛ր քու խօսքը մեռնող հոգւոյս Մանանան է երկնային.
Որ կուտայ ինձ նոր կեանքի յոյս.
Եւ սփոփանք իմ սրտին:

Ան երկնատուր Զուրն Կենաց,
Վճիտ, մաքուր, հոգեթով,
Որ կը զեղու քու գերազանց
Կեանքդ, հոգւոյս մէջ վրդով:

Ան կտրուկ է, երկսայրի սուր,
Որ Թափանցէ մինչեւ ծով.
Ան կը սրբէ սրբամաքուր
Սիրտըս մեղսոտ, չար, գժուծ:

Փարոսն է Ան Աստուածավառ
Ծով-աշխարհիս մէջ խաւար,
Որ մոլորուող հոգին Թշուառ
Շաւիղ գտնէ իր համար:

Տէ՛ր, քու խօսքը, այդ ազնիւ գանձ,
Թող միշտ պահեմ ինձ համար.
Ան շատ բարձր է ու գերազանց
Քան բիւր գանձեր ու գոհար:

Տէ՛ր շնորհէ որ շարունակ
Անոր յենուիմ լիայոյս.
Ան է յոյսիս խարխիս միակ,
Ան կուտայ ինձ Կեանք եւ Հոյս...:

(Վեր.) ԱՐՄԷՆ Ա. ԿԷՐԿԻՋԵԱՆ

Եռնիքն Սիմի, Նիւ ձրդի

.....

ՍԱՏՈՒ ՍՈՒՆՏԱՐ ՍԻՆԿՀ

(Շարունակութիւն 83րդ էջէն)

ԺԳ

Հայր. Պաշտպանութիւնն էր.—Սունտար արեւելեան Հնդկաստանի կողմերը, երբ որ Իլօմի մէջ կը քարոզէր, ձերբակալուելով բանտը նետուեցաւ, սա ամբաստանութիւնով թէ ժողովուրդը կը մոլորեցնէր օտար աստուածներու: Բանտը նախնական երեւոյթ մը ունէր. ընդարձակ զաւիթ մը, որուն մէջ Սունտար զոյնզոյն ու ամէն աստիճանի բանտարկեալներու ու ոճրագործներու հետ ընկելու էր: Ոմանցս համար թերեւս անմխիթար այս վայրը բնաւ յարմար չպիտի տեսնուէր, մինչդեռ Սունտար հոն Աստուածային սքանչելի նախախնամական կարգադրութիւն մը նշմարեց եւ սկսաւ քարոզել հոն, ուր մարդիկ թերեւս աւելի շուտով պիտի հնազանդէին հաւատքին:—Եւ իրաւ ալ այդպէս էր հոս անորոշ բազմին առջեւ կայնող այս խեղճ արարածները աւելի պատրաստ սիրտ ունէին: Նոր բանտարկեալին ներս գալէն հազիւ մի քանի ժամ անցած էր, եւ ահա բանտին չորս պատերը եկեղեցիի մը փոխուեցան ուր ջերմեռանդ ունեւորներու վրայներէն անծանօթ խաղաղութեան մը զաղտնիքը կը սփռուէր: Հոն վկայուեցաւ տնոնց, մարդկային սրտերը փոխող անձի մասին: Նախկին յուսահատ սրտեր իրենց նայուածքները զէպի վեր ուղղած, նոր փայլ մը կ'ընդունէին եւ շատերուն համար բանտը դրախտի վերածուած էր. «Ուր ես ներկայ' դրախտն հոն է»...:

Բանտի կեանքի փոփոխութեան լուրը քաղաքին հրապարակներուն մէջ սկսաւ խօսուիլ, ժողովուրդն ու կրօն. եւ քաղ. շրջանակները տեղեկացան թէ Սունտար քաղաքին մէջ արգիլուած կրօնքը բանտին մէջ կը քարոզէր: Սատու անմիջապէս դուրս հանուեցաւ բանտէն աւելի խիստ պատիժներու ենթարկուելու համար: Դատապարտեալը դատարանի հրապարակին վրայ սինի մը կապուեցաւ ոտքերէն ու ձեռքերէն, այնպէս որ նա ծռած մարմնով՝ կքած մնաց, ապա իր մերկ մարմնոյն վրայ արձակուեցան արիւնաքամ տղրուկներ: Օրը չարչարանքներով անցաւ, անոր

յաջորդեց ցո՛ւրտ գիշեր մը, այդ 24 ժամուան մէջ անհամար տղրուկներ կարծես քամել կ'ուզէին իրեն վերջին կաթիլ արիւնն ալ: Աստուծոն հետաքրքիր ժողովուրդը երբ հրապարակ կը վազէին տեսնելու տղրուկներուն քաջագործութիւնը, ապշութեամբ դիտեցին դեռ ապրող այդ զատապարտեալը, որու նայուածքին մէջ նկարուած կը տեսնուէր անոր ներքին սրտի անհուն խաղաղութիւնը:—

Սունտարի այս անակնկալ վիճակը աւելորդապաշտ ժողովուրդին վրայ սոսկում մը սփռեց: Ամէնքն ալ խորհեցան թէ նա զազոնի զօրութեան մը ազդեցութեան տակ կը գտնուէր, որ թերեւ իրենց վտանգաւոր դառնար, ուստի հարկ էր զայն կարելի եղածին չափ շուտով քաղաքէն հեռացնել: Սունտար, որուն մարմնին սպիները դեռ այսօր կ'երեւին, այնքան տկարացած էր որ մեծ նեղութեամբ կրցաւ ինքզինքը քաղաքէն գուրս քաշքշել, որմէ յետոյ զազոնի քրիստեղբայրութիւն մը զայն ներս առնելով խնամքով բժշկելէ յետոյ՝ ճամբու դրաւ:—

ԺԴ

Ամեն աքաղցր Պտուղը.— Սունտար երկար միսիննարակոն ճամբորդութենէ մը ետ կը վերադառնար: Արեւելեան եւ հարաւային Հնդկաստան իր ստեբրովը արդէն չափած եւ մի քանի ամիս ալ Սէյլանի, պուտտայականութեան միջնաբերդի մէջ ժամանակ անցուցած էր, այժմ իր քայլերը կ'ուղղուէին դէպի Սիմլա, Սապաթու եւ Քօթկար: Այս անգամ նոր ճանապարհակից մը ունէր թիպէթցի, թաւնիյաթ անունով, որ Տէրոջը առջեւ ուխտած էր, իր հայրենիքին մէջ Սատուի սկսած զործը շարունակել:

Սատու երբ որ իր հայրենիքը կը վերադառնար, անակնկալ մեծ ուրախութիւն մը ունեցաւ: Հայրը, որ մինչեւ հիմա անհաշտ էր իրեն հետ, իրեն դարձին կ'սպասէր: Որդին 10 տարուան քրիստոնէական հաստատակամութիւնը այդ ահարկու վտանգներու ու չարչարանաց հանդէպ՝ իր սիրտը կտոր կտոր ըրած էին: Անիկա արդէն իր սրտով շատոնց քրիստոնէայ եղած էր եւ կ'սպասէր իր որդւոյն դարձին, որպէս զի անոր միջոցաւ սուրբ հոգւոյ մկրտութիւնն ընդունէր: 1919 Յուլիսին մէջ Սունտար դարձեալ իր հայրենիքը կը մտնէր եւ Հոկտեմբերի մէջ էր, երբ որ հայրը զինքը կ'ողջագոյնէր: «Որքան ատեն որ դու ամէն բան առատօրէն ունէիր ու կը վայելէիր իմ տանս մէջ, ապերշտնիկ էիր, սակայն հալածանք, նեղութիւն վտանգներ Քրիստոսովդ երջանիկ ըրած են զքեզ, ուստի մտիւր իմ տունս, քու երջանիկ հօրդ տունը, վասնզի ես ալ քու Քրիստոսդ գտած եմ, Անիկա իմ փրկիչս ալ է»: Սատու

մէկ ակնթարթի մէջ իր հայրենիքն ու հօրենական տունը իր հարստութիւններով՝ վերըստացած էր: Հօրը իր միջոցաւ մկրտուելու պահանջը Սատու մերժեց ըսելով թէ, ինք եկած չէր մկրտելու, այլ ազգերու առաքեալ ըլլալու կոչուած էր աւետարանի քարոզութեամբ (ԺԱ. Կորնթ. Ա. 17):

Սունտար թէեւ օրէնքով դարձեալ հօրը ժառանգորդն էր, սակայն ամէն բանէ կամաւորապէս հրաժարեցաւ, ըսելով թէ տէրը զինքը կանչած էր հետեւելու իր քայլերուն, առանց քսակի, առանց գաւազանի... սոսկ աւետարանը քարոզել, միայն խնդրեց հօրմէն իր ամենամեծ փափաքներէն մին լեցնելու — իր Եւրոպա այցելութեան ծախքը ստանձնել: Հայրը սիրով ընդունեց այս պատիկ խնդրանքը եւ Սատու 1920ի Փետրուարին Լիվրփուլի մէջ առաջին անգամ ըլլալով Անգլիա ոտք կը կոխէր:

(Շարունակելի)

Յ. Ն. Ղ.

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ

Տօքթ. ԽՈՐՐԻ

Քրիստոնէական կեանքի մէջ յաջողելու համար՝ Աստուածաշունչը հետեւեալ եօթը պայմանները կը ցուցնէ մեզ:

Ա.— Շիտակ սկսիլ — «Բայց որոնք որ զինքը ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ սրբիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը»: (Յովհ. 1. 12) Ընդունէ Քրիստոսը իբրեւ քու փրկիչդ, իբրեւ զայն որ քու մեղացդ համար մեռաւ. վստահէ անոր ներողամտութեան որ ունի առ քեզ. հաստատուն կեցիր սա համոզման վրայ թէ ան քու բոլոր մեղքերուդ արժէքը վճարած է: «Վասնզի Աստուած զանիկա որ մեղք չէր գիտեր՝ մեզի համար մեղաւոր սեպեց, որպէս զի մենք անոր միջոցաւ Աստուծոյ արդարներն ըլլանք:

Ընդունէ զայն իբր քու ազատարարդ, որ քեզ պիտի ազատէ մեղքին զօրութենէն, նաեւ քեզ պիտի կենդանացնէ երբ մեղքի ու մահուան շուքին մէջն ես: Մի՛ ջանար ինքզինքդ ազատել մեղքի զօրութենէն, հապա անոր վստահէ որ ան ընէ: Ընդունէ զայն իբր քու Տէրդ, մի ջանար առաջնորդել քու անհատական կեանքդ. բոլորովին անձնատուր եղիր անոր Աստուածութեան: Անիկա է հրճուալի կեանքը. ճամբու ամբողջ ընթացքին ամբողջովին անձնատուր ըլլալ:

Եթէ ասկէ առաջ բնաւ ըրած չես, ու կ'ուզես քրիստոնէական կեանքի մէջ յաջողիլ, գնա՛ առանձինն Աստուծոյ, ծնրադրէ եւ ըսէ. «Ամէն ինչս քեզի Յիսուս»:

Բ.— Քրիստոսը դաւանիւ մարդոց առջեւ — «Արդ ով որ մարդոց առջեւ զիս դաւանի, ես ալ զանիկա պիտի դաւանիմ իմ հօրս առջեւ, որ երկինքն է»։ (Մատթ. 10. 32) «Վասն զի սրտով կը հաւատայ մէկը արդարանայու, ու բերնով կը խոստովանի փրկուելու»։ (Հովմ. 40. 10) Դաւանութեան կեանքը կատարեալ փրկութեան կեանքն է։

Գ.— Սերտեւ Աստուծոյ խօսքը — «Նորածին մանուկներու պէս բնական ու անխարդախ կաթին փափաքեցէք, որպէսզի անով մեծնաք (մինչեւ փրկութիւնը)»։ Աստուծոյ խօսքը հոգիին կերակուրն է, անիկա նոր կեանքին սրնունքն է. մէկը որ կը մերժէ խօսքը՝ չկրնար յաջողութիւն գտնել հոգեւոր կեանքին մէջ։

Դ.— Անդադար աղօթել (Ա. Թեապոն. 5. 17) — Մէկը որ կ'ուզէ յաջողութիւն մը ձեռք ձգել քրիստոնէական կեանքի մէջ, պէտք է ունենայ աղօթքի կեանք մը. ասիկա դիւրին է, միայն թէ սկսիս։

Ժամանակներ յատկացուր աղօթքի։ Դաւթի ու Դանիէլի կանոնները օրական 3 անգամ լաւ է. «Քրիկունը, առտուն ու կէսօրին պիտի բողոքեմ ու հառաչեմ, եւ անիկա պիտի լսէ իմ ձայնըս»։ (Սաղմ. 55. 17)։ Ու երբ Դանիէլ իմացաւ թէ հրովարտակը ստորագրուեցաւ, իր տունը դընաց. ու իր սենեակին մէջ պատուհանները դէպի Երուսաղէմ բաց էին, եւ օրը երեք անգամ ծունկի վրայ գալով աղօթք կ'ընէր, ու իր Աստուծոյն գոհութիւն կը մատուցանէր իր առջի սովորութեանը պէս (Դանիէլ 6. 10)։ Օրը սկսէ շնորհակալութեան աղօթքով։ Շնորհակալութիւն անցեալի որոշ օրհնութիւններու համար, աղօթել օրուան ու ներկայի որոշ պիտոյից համար։ Կանգ առ օրուան հոգեբուզ եւ փորձառութեանց վրայ հասած ժամանակը՝ ու աղօթէ։ Վերջացուր օրը շնորհակալութեամբ եւ աղօթքով։ Պէտք է մասնաւոր աղօթք մասնաւոր փորձութեանց պարագային, երբ կը տեսնես թէ կը մօտենայ՝ Աստուծոյ նայէ։ Հարկ չկայ անպատճառ ամէն ատեն ծնկան վրայ գալ, հապա սիրտը ծնկան վրայ ըլլալու է։ Մասնաւոր աղօթք պէտք է հետեւեալ երեք բաներուն վրայօք որ քրիստոնէական յաջող կեանքի մը ծուծը կը կազմեն։ 1) Իմաստութիւն. — «Եթէ ձեզմէ մէկը իմաստութենէ պակասած ըլլայ, թող Աստուծմէ խնդրէ»։ (Ղուկ. 1. 3) 2) Զօրութիւն. — «Տէրոջը ապաւինողներուն ուժը պիտի նորոգուի»։ (Եսայ. 40, 31)։ 3) Սուրբ Հոգի. «Զեր երկնաւոր հայրը Ս, Հոգին պիտի տայ անոնց՝ որ իրմէ կը խնդրեն» (Ղուկ. 11. 13)։ Եթէ Ս. Հոգուով միջոցաւ չես՝ կրնաս վճռական աղօթքներ ընծայել այս օրհնութեանը համար, մինչեւ որ անոր տիրանաս։ Եւ եթէ զայն ստացած ես, կրնաս՝ քրիստոնէական ամէն ստիպեալ հար-

կի տակ՝ աղօթել Աստուծոյ նորէն լեցուելու համար։ (Գործ. 4. 31)։

Ե.— Քրիստոսի համար գործի երթալ — «Վասնզի ամէն ունեցողին պիտի տըրուի, ու պիտի աւելնայ, եւ չունեցողին ունեցածն ալ անկէ պիտի առնուի»։ (Մատթ. 23. 29)։ Աշխատող քրիստոնեան, ան որ կը գործածէ իր տաղանդները Քրիստոսի սիրոյն, որքան որ ըլլայ, քիչ կամ շատ՝ հոգեւոր կեանքի մէջ մեծցող մէկն է. այդպիսի մէկը պիտի գովուի։ «Ապրի՛ս, բարի եւ հաւատարիմ ծառայ... մտի՛ր Աստուծոյ թաղաւորութեանը մէջ»։

Քրիստոսի համար գործ մը գտիր եւ ըրէ. փընտէ գործ մը, ըլլայ տալու, ըլլայ հրաւիրելու նախ որ միշտ բան մ'աւելի ընես Քրիստոսի սիրոյն. փոխարէնը միշտ բան մ'աւելի պիտի ստանաս Քրիստոսէ։

Զ.— Առատաձեռնութիւն — «Ան որ կ'ոռոզէ՛ ինքն ալ պիտի ոռոգուի» (Առակ. 11. 25)։ «Ան որ խնայելով կը սերմանէ, խնայելով պիտի հնձէ. ան որ առատութիւնով կը սերմանէ, առատութիւնով պիտի հնձէ» (Բ. Կոր. 9. 6, 8)։ Սքանչելի է տեսնել քրիստոնէին աճումը՝ երբ նա տալ կը սկսի։

Է.— Յառաջ ընթանալ — «Եղբայրներ ես չեմ սեպեր որ բռներ եմ. բայց մէկ բան մը կայ որ կ'ընեմ. ետեւի եղածները մոռնալով, առջեւի եղածներուն կը դիմեմ։ Նպատակը դիտելով՝ Քրիստոս Յիսուսով եղած, Աստուծոյ վերին կոչմանը մրցանակին կը վազեմ»։

Մոռցիր ետեւը թողած մեղքերդ, եւ եթէ տկարանաս կամ իյնաս, մի յուսահատիր եւ ուժաթափ ըլլալով ինքզինքդ մի՛ լքաներ. մեղքին վրայ մի՛ մտածեր։ Վայրկեանական խոստովանէ, Աստուծոյ խօսքին հաւատաւ։ «Եթէ խոստովանինք մեր մեղքերը՝ հաւատարիմ ու արդար է մեր մեղքերը ներելու եւ մեզ բոլոր անիրաւութենէ սրբելու» (Ա. Յովհ. Ա. 9)։ Հաւատա որ մեղքը ներուած է, մոռցիր զայն եւ յառաջ գնա։ Սատանան կը կապէ հոս շատ մը խեղճ հոգիներ, նա մեզ կը պահէ մտատանջ վիճակով մեր մեղքերուն եւ անկումներուն վրայ թխեցնելով։ Մոռցիր անցեալի պարտութիւններդ եւ յաղթութիւններդ եւ յառաջ գնա՝ զգուշացիր, սատանան կը խաբէ մեզմէ շատեր աւելի փառաւոր կեանքէ զրկելով։ Նա չափազանց մտածել կուտայ մեզ այն բաներով զոր մենք արտադրած ենք, եւ այդպէս գոհունակութիւն արթնցնելով կ'ուռեցնէ կը կասեցնէ մեզ եւ կամ կը ձգէ։ Մեր միակ ապահովութիւնը ետեւի եղածները մոռնալով յառաջ երթալուն մէջ կը կայանայ։ Այսպէսով միշտ լաւագոյն արդինք մը կը շահուի։

«Մինչեւ ամէնքս ալ հասնինք հաւատքին՝ ու Աստուծոյ Որդին ճանչնալուն միաբանութեանը, կատարեալ մարդ ըլլալու» (Եփես. 7. 13)

ՄԻԻՄԻՆԼԷՐ ՏԻՒՆԵԱՏԱ

Քրիսթիանյանը ինչ էլ զէմանյարընտա եա-
շամը օլան սատէ վէ խալիս պիր միւմին շէօյլէ
եազըյօր :

«Քրիսթիանյանը՝ մէմլէքէթ, լիսան եա ատէթ
խուսուսուստա պաշգա ինսանյարտան Ֆարգլը
տէյիլ տիրլէր: Քրիսթիանյանը՝ նէ այրը էյալէթ-
լէրտէ եաշարլար, նէ այրը պիր լիսան սէօյլէր-
լէր, նէ տէ այրը ատէթլէրի վար տըր: Քրիսթի-
անյանը քէնտի նասիպլէրինէ կէօրէ՝ Բօմալը եա
պարպար մէմլէքէթլէրտէ պուլունտուզլարը եէր-
տէ էլպիսէ վէ թաամ վէ մէսքէն ուսուլլարընա
կէօրէ եաշարլար, եինէ տէ աճաիպ պիր հալ
կէօթէրիլէր վաթանյարընտա եաշարլար, ամ-
մա դարիպլէր կիպի: Թէպաա հալինտէ հէր վա-
զիֆէյէ հիսսէտար օլուրլար, եինէ տէ էճնէպի
կիպի մուամէլէ կէօրիլլէր: Հէր էճնէպի տիյար
քէնտիլէրէ վաթան, վէ հէր վաթան էճնէպի պիր
տիյար տըր: Թէնտէ տիրլէր, ամմա թէնէ կէօրէ
եաշամազլար: Զէմինտէ սաքին օլուրլար, ամմա
սէմանըն շէնրիլլէրի կիպի եաշարլար: Հէր ատէ-
մի սէվէրլէր, ամմա ճիւմլէսի թարաֆընտան թէ-
ատտի կէօրիլլէր: Նամալիւմ իքէն հիւքմ օլու-
նուրլար. գաթլ օլունուրլար եինէ տէ եաշարլար:
Փուզարա տըրլար, ամմա չօզլարը գէնկին էտէր-
լէր: Հէր շէյէ միւնթաճ իքէն, հէր շէյտէ գանի-
մէթտէ տիրլէր: Հազգլարընտա քէօթիւ սէօյլէ-
նիր, ամմա խայր տուա էտէրլէր: Խայր իշլէրլէր,
ամմա շէրր իշլէյէնլէր կիպի ճէզա կէօրիլլէր:
Շէնուտիլլէր թարաֆընտան էճնէպի տէյու հա-
զարէթ կէօրիլլէր վէ Բօմալըլար թարաֆըն-
տան գօվալայըն շէքէրլէր, վէ քէնտիլլէրի գօվա-
լայանլար նէ իշիւն գուլմ էթտիքլէրինի սէօյլէ-
մէզլէր: Ճան ճէսէտտէ նէ իսէ քրիսթիանյանը
տիւնեատա էօյլէ տիր: Քրիսթիանյանը տիւնեա-
տա տըրլար, ամմա տիւնեատան տէյիլ տիրլէր:
Վահշի հայվանլար էօնիւնէ աթըլմազլէ մազլուպ
օլմազլար. պուլար Ալլահըն գուլվէթինին ամէլ-
լէրի, Անըն հուզուրունուն էսէրլէրի տիր» :

Բրօֆ. Լ. ԼԵԻՈՆԵԱՆ

ՊԱՆԱ ՀԷՐ ՇԷՅՏԷ ՀԷՐ ՇԷՅ ՅԻՍՈՒՍ

Հէր հալ, մահալտա, Յիսուս պէնիմլէ
Խալիթլմ հօզ՝ օլսա փէք չօզ թէհլիքէ
Միւմքին տիր հէր շէյ Անըն ինտինտէ
Պիզգաթ 0 պանա հէր շէյ, հէր շէյտէ:

Սէրվէթ կէլմէքքէն հատտ ու հիսապա
Միւնթաճ պուլունտամ թէք նան փարայա
Ճանֆէն եէրինէ կիյսէմ փաշավրա
Պու քեաֆի պանա՝ Յիսուս եանըմտա :

Մէվթ հիւճիւմ էտիպ դալէպէ չալսա
Փէտէր մատէրիմ էլիմտէն չալսա
Պէնի պիշարէ պիքէս պրապուս
Պու քեաֆի պանա՝ Յիսուս եանըմտա :

Շայէտ օղրաասամ իֆթիւրա դատրա
Թէպիտ էտիլսէմ ուզապ տիյարա
Իլգա էտիլսէմ հապսա զընտանա
Յիսուս պէնիմլէ՝ պու քեաֆի պանա :

Վուրսալար պէնի գէնճիր թօմրուդա
Օրյատա օլսամ նամիգաճ խասթա
Մահրումտա օլսամ ազրապա տօսթա
Պու պանա քեաֆի՝ Յիսուս եանըմտա :

Վէրսէլէր պանա խայլը իսքէնճէ
Հէր կիւն հէր սաաթ վէ հէր սանիյէ
Մուհաթ պուլունտամ մէվթ քէմէնտիլլէ
Պու պանա քեաֆի՝ Յիսուս պէնիմլէ :

Էնճամ քէսր էթսէ մէվթ՝ հայաթ թէլիւմ
Նութգուլմ թութուլսա լալ օլսա տիրիւմ
Սօղուզ մէզարտա չիւրիսէ թէնիւմ
Պու քեաֆի պանա՝ Յիսուս նասիպիւմ :

Պու շիր սէֆէրպէրլիք զարֆընտա Տեր Զօր չէօլլէ-
րինտէ եազըլմըն տըր :

ԱԼԼԱՀԷՆ ԻՇԼԷՐԻ

(Յովհ. 9. 3)

Թիւքրիւքլէ պալըզ եափտը վէ
պալըզը քէօրիւն կէօզլէրի իւզէ-
րինէ սիւրտիւ... Յովհ. 9. 6

Ալլահըն իշլէմէք ուսուլու վէ իշլէրի նէ՝ ա-
ճաիպ տիր, նիչէ տէֆալար 0 պիզտէ իշլէրքէն
շաշար վէ շաշտըրըրըզ: Ալլահըն կէրէք իւզէրի-
միգտէ, կէրէք պիզտէն խարիճտէ եափտըզ հէր
շէյի տէրհալ անլամազ վէ պաշլատըզընտա նէ-
թիճէսինի պիլմէք իսթէրիգ: Նիչէ տէֆալար կէօ-
նէկէօն թէֆսիլլէր՝ «Ֆիւան վէ ֆիւան գուլվէթ
եա գաիտէլէր նէթիճէսի տիր» տէյէ, պիզիւմ տէ
գանի օլամատըզմըզ նէթիճէլէրտէ գարար զը-
լարըզ :

Պուրատա Ալլահըն աճաիպ պիր իշլինի կէօ-
րիւյօրուզ. Յովհ. 9. 6. պիր քէօրիւն կէօզլէրի ա-
լըլըյօր, կէօզէ չամուր սըղայարազ շիֆա վէրի-
յօր: կէօզ վէ թօփրազ եէքտիկէրինէ նէ գատար
զըտտ շէյլէր տիր. կէօզիւմիւզէ ուֆազ պիր թօզ
կիրսէ րահաթսըզ օլուրուզ՝ եա չամուրլա տօ-
լարսա . . . : Պու պիզիւմ ազլըմըզա սըղայան
պիր շէյ տիր. իւզէրինտէ շիֆա միւճիւզէսի իճ-
րա օլունան ատէմ տէ պունա թէաճիւպ էթտի
վէ «պու աճաիպ պիր շէյ տիր» տէտի. Յովհ. 9. 30 :

Ալլահն պէօյլէ իշլէրի ազ տէյիլ տիր: 2օգ տէֆա Ալլահն պաշլատըզը պիր իշտէ իւք պազըշտա մատտի զիյան՝ վէ խարապիյէթ վէ էլէմ հէօրիւրիւզ. տուա վէ մէմուլըմըզըն թամմ զըտտը օլույօր տէրիզ՝ պուլանըրըզ, մըրըլտանըրըզ, ալթ իւթ օլուրուզ. սօնուտա Ալլահտան ութանըրըզ. հէօրիւրիւզ քի Ալլահ անըտան թաթլը, զուլմէթտէն նուր, քէտէրտէն սէֆա վէ էօլիւմտէն հայաթ մէյտանա կէթիրի. մէմուլ էթմէտիյիմիզ հէյպէթլի շէյլէր ետիան 0 տըր: Ես. 64. 3.4:

Պուրատա շայանը տիգգաթ պիր վազըա տա կէօզ սահիպիւնի սիւքիւթիւ տիր: Յիսուսուն պու իշի ազլա զարշը իտի. քէօր՝ «էֆէնտի, պաշգա պիր եօլտա պանա շիֆա վէր, պու կէօզիւմիւ տահա զիյատէ պօզույօր» տէյէ պիւրի իտի. լաքին սիւքիւթ, Ալլահն զուտրէթլի էլի ալթընտա միւթէվազը օլարազ Անըն ճիւմլէ ետիտըզը վէ տէտիյի շէյլէրէ իթաաթլէ սօնունա մուսթաղըր իտի: Պիզ էրմէնի գաւմը Ալլահն իւզէրիմիգտէ չօգնա իշլէտիյի պիր գաւմըզ. քեաշքի պիզ տէ պու ամա կիպի սիւքիւթլէ Անըն էլլէրինի մէնն էթմէյէ չալըշմայա իտիք վէ գօյտուղու իւաճլարա միւտաիւէլէ էթմէյէ իտիք. 0 նէ ետիւրյօրսա պէլքի վէ մաքսէտլէ վէ մէնֆաաթըմըզ իշիւն ետիւրյօր. Եզք. 14. 23: 0 քէնաիւնէ պրազըլան հէր շէյի էտէն տիր. Մար. 7. 37:

ԽԷՃԻԼ ՕԼՄԱՅԱՆ ՊԻՐ ԻԹԻՄԱՏ

Պատ. Հէնքէ պիր կիւն քէնտի մէշգ օտաւընաա օթուրույօր իտի, իթիյար խըտմէթճէտի եանընա կէլիպ, էօյլէ թաամընա փրրինճ վէ էթ սաթուն ալմազ իշիւն փարա իսթէտի, պատուելի «փարամ եօզ տըր» տէտի: «Պիր քիմսէտէն էօտիւնճ փարա ալայըմմը», «խայր», «էօյլէ իսէ նէ՝ փիշիրէյիմ, հիշ պիր շէյ» շու հալտէ հիշ պիր շէյ եէմէյէճէք միսիւրիզ», «թապիի եէյճէյիմ» «ամմա նէրէ՝տէ եէյէճէյիմ», «պուրատա, օտամտա» իթիյար գատըն պաշընը սալլայարազ օտատան տըշարը չըզտը:

Սաաթ 12յի չալուր, Հէնքէ Սօֆրանըն դօնուլմասընը էմը էթտի, Սատըզ խըտմէտի «քիմ իշիւն» տէյու սիվալ էթտիյինտէ, «իքիմիզ իշիւն» տէտի, «լաքին պիզիմ եէյէճէյիմիզ եօզ, «եէթէր գատար օլաճազ տըր»: Իմտի սօֆրա զօնուլտու վէ սօֆրայա օթուրտուլար, Հէնքէ սօֆրա տուսաընը տախի էթտի: Տուատան սօնրա տըշարըտա ալազ սէսլէրի, իշիտիլտի վէ շէհիրտէ եաշայան զէնկիւն պիր քիմսէնիւն իքի խըտմէթճիւրէրի ազըր սէփէթլէր իլէ իլէ իլէրի կիրտիլէր: Մէրգուլմ թիւճնար պազը միւսաֆիրլէր տալէթ էթմիշ իտի, օլ միւսաֆիրլէր կէլէմէմիշ օլտուզլարը սէպէպտէն, օլ ֆազլա թաամլարտան քէնտիւնի պու տօսթունա եօյլամըշիտի:

(Ալմանցատան Թէրցիմէ)

Պիր գաշ ալտան պէրրու Լիօնտա պուլուշուլ, պիւթիւն Ավրոփատա բուհանի խըզմէթլէր ետիմազտա օլան, Հինտիսթանլը միւսէշշիր Սատու նէլսըն պանա շու նազլիյէթի էթտի:

Մէրգուլմ Հինտիսթանտա իքէն, եաշայըպ, իշլէտիյի շէհիրտէն, պաշգա պիր շէհիրէ կիտիպ բուհանի խըզմէթլէր ետիմազ իշիւն եօլճուլուզ էտէճէք իտի, իսթասիօնա կիթտի, թրէն կէլտի, լաքին քէնտիւնի պիլէթ ալմազ իշիւն փարատը եօզ իտի. ամմա քէնտի սազին պիր բուհ իլէ պէլէմէքտէ իտի, չիւնքի քէնտիւնի օրայա կիթմէյէ Ալլահ թէշվիզ էթմիշ օլտուղու նա էմին օլտուղու իշիւն, իճապ էտէն վասըթայըտա թէտարիք էտէճէյիւն էմին իտի:

Օլ սըրատա էօթէտէն հիշ թանըմատըզը պիր քիմսէ եանընա կէլիպ «պիլէթ ալմըշմըսընըզ» տէյու սիվալ էթտի մէրգուլմ կիլիւմսէյէրէք «խայր» տէտիյինտէ կիտիւն իճապ էտէն պիլէթի ալարազ քէնտիւնի թրէնէ գօտու:

Սատու նէլսընըն էօմիւնտէ պու վազաա թէքտէն պիր վազաա տէյիլտիր, անըն պիլթիւն եաշայըշ վէ իշլէյիշիւն ուտուլու Ալլահա օլան պու իթիմատ իլէ տիր:

Ժ. Կ. Պ.

ՄՈՎՍԷՍԻ ՔԱՐԵՏԱԽՏԱԿՆԵՐԷՆ ՄԻՆ

Գ Տ Ն Ո Ի Ա Մ

1923, Հոկտ. 19ին «Պէրլինէր Յայթունկ» կէսօր թերթը կը գրէ 287ի թիւին մէջ.

Բ ո օ ֆ. Տ ո ք թ. Կ ր ի մ յաջողեցաւ հաստատել թէ ո՞րն է Աստուածաշունչի Սինայի լեռը: Բաց աստի հոն գտնուած փորագրութիւններ կ'ապացուցանեն թէ Ս. Գրական ժամանակներուն մէջ՝ հոն այդ շրջանակներուն մէջ մարդիկ կը բնակէին, որոնք Երբայական լեզուն կը խօսէին:

Նոյնիսկ փորագրութիւն մըն ալ յայտնի եւ սորշ կերպով կը վկայէ Մովսէս Մարգարէին պատմական դէմք մը ըլլալը:

1905ին Անգլիացի գիտնական մը Ֆլինտրի ֆլեթերի Սինայի լեռներուն՝ Սէրափիթէ-Խատի մ լեռնադաշտին վրայ գտաւ հին եգիպտական տաճար մը, որ Ն. Ք. 1500ի ժամանակներէն կը սերի: Այդ տաճարին մօտ 8 քարետախտակներ գտաւ, որոնք զրեթէ նոյն ձեւը կը կրէին, ինչպէս որ Օրինաց տախտակները կ'ենթադրուէին ըլլալ: Այս տախտակները մինչեւ 1916 անընթեռնելի մնացին: Անկէ յետոյ էր որ աշխարհի ամենամեծ եգիպտագէտին՝ Alan Gardinerի վիճակուեցաւ ասոր բանալին գտնել:

Արդէն այն ատեն յայտնի էին թէ այս նշանները ոչ-եգիպտացիի մը գործերն էին, որ սակայն եգիպտական գրերը կը ճանչնար:

Արդ, Բրոֆ. Կրիմ հաստատած է թէ այդ քարերու լեզուն Ս. Գրքի եբրայեցերէնի հետ լման կը համաձայնի, որով կը հասկցուի թէ եբրայեցերէն լեզուն առաջինն է որ գրերով գրուեցաւ: Բրոֆ. Կրիմ նաեւ փորձեց այդ գրուածները կարգաւ եւ բացատրել անոնց պարունակութիւնը:

Այս 8 տախտակներէն միոյն վրայ 3 տող գրուած է, որոնց ընթերցանութիւնը, Բրոֆէսորին ըսածին համաձայն՝ իր սրտի բաբախումը կասեցուց: Այս 3 տողերուն մէջ տաճարի մը քահանայապետը, իր երախտագիտութիւնը կը յայտնէ փառանոհի Յիսայէ փսալթի, որ գինքը նեղուէն հանած եւ բարձր արժանիքներու հասցոյցած է, Այս անձը ինքզինքը կը կոչէ Մովսէս: Գրութեան ծագման թուականը կը համապատասխանէ Ս. Գրքի Մովսէսի տուած թուականին:

Թրգմ. Գլխմաներէնէ

ԲԱՆԿԱՆՑ ՍԻՆԱՅ

ԿԱՐՄԻՐ ԴՐՕՇԱԿԸ

Երկաթուղիի մեքենավար մը օր մը իր աղջրկան կարմիր դրօշակ մը տուաւ անոր իբր խաղալիք, բացատրելով անոր թէ շողեկառքի գծին վրայ կարմիր դրօշակ մը վտանգի ազդարարութեան նշանն էր:

«Լա՛ւ հայրիկ, եթէ գծին վրայ դուն կարմիր դրօշակ մը տեսնես՝ քու կառքդ անմիջապէս կը կեցնե՞ս»

— «Անշո՛ւշտ, պատասխանեց հայրը, եթէ ոչ մեծ չարիք մը կը պատահի»

Հայրը մեկնեցաւ. աղջնակը գնաց իր մօրը՝ եւ զայն գտաւ արցունքով լի աչքերով:

«Մամա՛, ինչո՞ւ կուլաս, ի՞նչ բան քեզի ցաւ կը պատճառէ»

Յանկարծ մանկան աչքին զարկաւ սեղանին վրայ բերանաբաց շիշ մը, որմէ ալքօլի զօրաւոր հոտ մը կուգար:

«Ո՛հ, մայրիկ, ես գիտե՛մ դուն ինչու կուլաս»

ան չէ՞ որ հայրիկը նորէն օդի խմած է գործի երթալէ առաջ, եւ դուն իրեն համար կը վախնաս»

Մայրը գլխով հաստատական նշան ըրաւ, յետոյ վայրկեանէ մը, աւելցուց, — «Իմ ամէն խօսքերս իրեն անօգուտ են: Ամէն օր քիչ մ'աւելի կը խմէ եւ այսպէս միշտ գէպի կորուստ կ'երթայ: Ես վստահ եմ թէ քիչ ժամանակէն իւր գործէն կը հանեն գինքը, եւ այն ատեն մենք ի՞նչ պիտի ընենք»

Ասոր վրայ մանուկը մտախոհ դարձաւ: Տանը մէկ անկիւնը քաշուած ան կը մտածէր թէ ի՞նչ կրնար ընել իր հայրիկը զգուշացնելու եւ զայն խմելէ արգելելու համար: Յանկարծ իր մտքէն գեղեցիկ գաղափար մը անցաւ...

Յաջորդ առտուն, մեքենավարը երբ գործի չմեկնած, գնաց ըստ սովորականին իւր օդին խմել, գտաւ, շիշին կապուած, փոքրիկ կարմիր դրօշակը, վտանգի ազդարարութեան նշանը մահացուցիչ ըմպելիքին քովը...

Ան հասկցաւ, եւ ինքզինքին եկաւ:

Մանուկը փրկած էր իր հայրը:

ԹՐԳԱԽՕՍ ԷՐՄԵՆԻԼԷՐԷ

Յրանսատա սաքին թրքախօս պիրէտէրլէրի-միզաէն պիզէ վասըլ օլմուշ միւթէնէվլի մէք-թսւպարա միւթաազըպէն՝ «Բահնիւմա»նըն մու-էլլիֆի Բրոֆ. Յովհաննէս Գ. Գրիգորեանա միւրաճաաթ էթմիշ վէ աթիտէքի ճէվապը ալմըշըզ:

«Բահնիւմա», հայատառ թրքերէն շաբաթաթերթը, կը հրատարակուի թրքախօս հայերուն օգտին համար, որոնք զրեթէ ուրիշ թերթ մը չունին: Թերթը Նիւ-Եօքքի մէջ կը հրատարակուի մեծ գոհողութեամբ: Բաժնեգիրն տարեկան հինգ տոլար է. բայց այն գաղթականներ որ չեն կրնար այս գումարը վճարել, կրնան ստանալ զայն երեք տոլարով: Այն գաղթականները որ բոլորովին անկարող են վճարելու, եթէ մեզի վստահելի յանձնարարութիւն տան, վեց ամսուան համար ձրի կ'ընդունին:

Հասցէն. Rev. H. K. Krikorian

«Rahnuma»

207, Lexington Ave.

New-York, N. Y. (U. S. A.)

Շնորհակալութիւն.—Վերջին 2 ամիսներուն մէջ մեզի հասած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Օգոստայէն	2 տոլար
Ֆիլատէլֆիայէն	2 »
Սըմըրվիլէն	5 »
Լօրէնսէն	2 »
Մէքսիքոյէն	3

Փոխնակներն
Ուշագիծ Թիւրաւէլֆիւլէն 1 »
Մարտէյէն 20 ֆրանք
Ասոնց համար «Բանբեր» իր մասնաւոր շնոր-
հակալութիւնները կը յայտնէ:


— ՅԱՆԿ ՆԻԻԹՈՅ —

Նիւթ	Էջ
Աղքատ հարուստը	70
Անակնկալ կտակը	58
Աշխարհի ամենէն շատ գնուած գիրքը	31
Աջդ մէքթուպ	68
Ալաիին իշխերի	93
Անհաճոյ անակնկալ մը	59
Բանբերի ռազմաճակատը	74
Գալպիմին տուարը	70
Դանձը	55
Դափույտ չալընը վէ աջըլահազ տըր	84
Դիտեմ որ իմ փրկիչս կ'ապրի	5
Դորձական քրիստոնէին ազդեցութիւնը	23
Եէնի սէնէ Թէֆէքքիւրի	77
Եթէ գոյութիւն ունիս ինքլինքո ցուցուր մեզի	86
Եօլարընը ըստպա հէվալէ էյլէ	77
Ջանազան լուրեր 4, 8, 10, 24, 32, 40, 48, 56, 63, 71, 80, 88	
Էպէտիյէնին Էշիյինտէ	53
Թրքալիս Էրմէնիլէրէ	95
Իդնս	50
Իմ փրկութիւնս	67
Ի՞նչ պէտք է ընես կորսուելու համար, փրկուելու համար	82
Իքի վագապար	30
Խաւարէ ի լոյս	66
Խէնիլ օլմայան պիր իման	94
Խոհեր նոր տարուան առթիւ	73
Կազմակերպիչք Ե. Փ. Ընկերութիւններ	7, 14
Կամ վահանիդ տակը կամ անոր վրայ	25
Կարևոր զեկուցումներ 4, 16, 24, 40, 64, 72, 88,	
Կարմիր դրօշակը	95
Կէօրիւնմէյէնին մէվնուտիյէնին շիւպիէ	29
Հայ քահանայի մը խօսքը իր ազգին	17
Հայաստանի մը խոհերը Հոգեգալուստի առթիւ	9
Հարիւրապետի մը վերջին նամակը	15
Մեղքը ու մեղքին ազդեցութիւնը	87
Մեր նպատակը	1
Մեր քուլը կեցիք	57
Մէկ գիր միայն	78
Միւթէնէվլի նագլ իյէնլէր	13
Միւսիւնլէր տիւնետա	93
Միսիմարուած միսիմարելու համար	89
Մովսէսի քարետախտակներէն մին գտնուած	94
Մուհաճիր միլլէթտաշլա ըմբղա	3

Նիւթ	Էջ
Մտերիմ խօսքեր	79, 88
Յաղութեան ճամբան	91
Յանձնուէ Յիսուսի	76
Յիմար մըն ալ	67
Յիսուս Գրիստոս գըյամ էթտի	7
Յիսուսուն մուհապպէթի	46
Նէֆուէն ազատ օլմագ	45
Շարանական խորհրդածութեանց շուրջ	71
Շարանական խորհրդածութիւններ 20, 31, 39, 47, 55, 62,	
Շնորհակալութիւն	32, 40, 64
Ռիստ	83
Պանա հէր շէյտէ, հէր շէյ Յիսուս	93
Պարտուած	33
Սալմ քէնտիւնէ եաիմայօր	60
Սատու ճան Նէլրնի պատգամը	41
Սատու Սունտար Սինկի 2, 6, 10, 18, 26, 35, 43, 51, 59,	
	75, 83, 90
Սէր է Աստուած	23
Սիւ պէնիմ շայիպէրիմ սինիլ	37
Ս. Դրոց մասին հետաքրքրական գիտելիքներ	15
Սուրբեր եւ հաւատացողներ	81
Ստացուած թերթեր եւ գրքեր	72, 88
Վարժութիւն	39, 70
Վագմընտա վուրուլան պիր սիլլէ	61
Վանան	40
Տէր քու հոգի չէ՞, ահա կը կորսուինք	49
Տէրոջ խօսքը	90
Տիւմէնի վէ գայրգճը	86
Տուա էթմէյի պիլի՞րմիսին	85
Րիչարտ Ռիվըրըն Լօնտրայա եօճուլուղու	21
Րուսիաստ ինթիպահը ըրուհանի	37
Փոխան վկայութեան	34
Փրկութեան օրը	68
Փաշալերութիւն	8
Քիթապը մուգատտէսինի Էվսէ ունութմուշ	12

— ՎՐԻՊԱԿ —

«Բանբեր»ի էջ 20 ա. սինակ վարէն 7րդ տող «օտաւա»
կարդալ պատուական. էջ 20 բ. սինակ 4րդ տող երկինքը
կարդալ իր կեանքը. էջ 42 բ. սինակ 18րդ տող կանոնիկ
կարդալ եղբայր. էջ 81 ա. սինակ վերէն 3րդ տող ան-
գամ հաւատացեալ կարդալ հաւատացող. նոյն էջին մէջ
բ. սինակ վերէն 5րդ տող՝ անգամ հաւատացեալ կար-
դալ հաւատացող
Կարգ մը դիւրմբունելի վրիպակներ շտկուած չեն:



Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպագր. Ա. ԵՐԷՅԵԱՆ
40, Րիւ տէ Տօմինիքէն. Մարտէյլ